

Հայտարարություն

ՀՀ առողջապահության նախարարությունը 2019 թվականի սեպտեմբերի 20-30-ը մեկնարկել է նպատակային կլինիկական օրդինատուրայի ծրագրի 2019-2020 թվականների ընդունելության 2-րդ փուլը: Հայտեր կարող են ներկայացնել Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարանի այս և նախկին տարիների բժիշկ-շրջանավարտները, ինչպես նաև արդեն աշխատող բժիշկ մասնագետները, ովքեր ցանկանում են ձեռք բերել նոր մասնագիտություն:

Նպատակային կլինիկական օրդինատուրայի ծրագրի 2019-2020 թվականների ընդունելության 2-րդ փուլի **հայտերը ընդունվում են հետևյալ մասնագիտություններով՝**

Լաբորատոր ախտորոշում	3 տեղ
Ընդհանուր վիրաբուժություն	2 տեղ
Մանկաբարձություն և գինեկոլոգիա	1 տեղ
Նյարդաբանություն	3 տեղ
Ընտանեկան բժշկություն	5 տեղ
Պալարախտաբանություն /ֆտիզիատրիա/	1 տեղ
Հոգեբուժություն	1 տեղ
Մանկաբուժություն	3 տեղ
Ներքին բժշկություն	1 տեղ
Վնասվածքաբանություն և օրթոպեդիա	1 տեղ
Շտապ բուժօգնություն	4 տեղ
Մանկական անեսթեզիոլոգիա և ռեանիմատոլոգիա	2 տեղ

Մանրամասներին ծանոթանալու և պայմանագիր կնքելու համար ցանկացողները կարող են դիմել Առողջապահության նախարարություն (Կառավարական տուն N 3), անձնակազմի կառավարման վարչություն, 211 սենյակ, հեռ. 060-80-80-03 / 1505, 1504 /: